ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 1998 թվականի, №28
քաղ. Երևան

ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական հաշվետվությունների (տեղեկատվությունների) ձևերի հաստատման և ներկայացման մասին

Ղեկավարվելով ,Էներգետիկայի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը որոշում է՝

1. Մինչև հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսատնտեսական հաշվետվությունների ձևերի սահմանումը, հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների (տեղեկատվությունների) ձևերը (հավելվածներ № 1ա, № 1բ, № 1գ և №2):

2. Հաստատել տնտեսավարող սուբյեկտների կողմից ֆինանսատնտեսական հաշվետվությունների (տեղեկատվությունների) ցանկը և նրանց ներկայացման ժամանակացույցը (հավելվածներ №3, №4):

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
փոխնախագահ՝ **Ն.Գրիգորյան**